Գևորգ Էմին

Ձյու՞ն է գալիս

Ձյու՞ն է գալիս,
Եվ մի աղջիկ ,մայթում խավար,
Քայլու՞մ է ու անձայն լալի՞ս…

Ինչու՞ է նա այդպես լալի՞ս…
Ու մոլորված գնում-գալի՞ս,
Նոր տարվա օ՛րն այս խանդավառ.

Գուցե նրա հե՛րթն է գալիս
Զգալու՛, որ կյանքը, ավա՜ղ,
Հաճախ նաև… վի՞շտ է տալիս.

Դրա համար էլ նա՝ լալի՞ս,
Ձյունն ու արցունքը կո՞ւլ տալիս ,
Դեգերո՞ւմ է մայթում խավար.

Եվ կարծում է հավանորեն,
Թե էլ չի՞ գա բախտը նորեն
Եվ…անցե՞լ է անդառնալի…

Որտեղի՞ց այդ գիժն իմանա,
Որ ամե՞ն ինչ, այս ձյան նման,
Գալիս է, որ հալվի՞- գնա՞,

Եվ զո՞ւր է նա այդպես լալիս…
Ձյու՞ն է գալիս...